ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«23» մարտի 2026թ. ՆՄՈ/104-Ա

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N393 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ «ԱՐԱԶԱՓԻ Թ. ՀՈՒՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ԵՎ «ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Մ. ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ N 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» ենթակետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման 5.4-րդ և 6-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2026 թվականի փետրվարի 17-ի N ՄՈ/92-Ա և փետրվարի 19-ի N ՄՈ/96-Ա որոշումները.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2017 թվականի հոկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների կանոնադրությունները հաստատելու և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N393 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշմամբ հաստատված N13 հավելվածի «Արազափի Թ. Հուրյանի անվան միջնակարգ դպրոց» և N47 հավելվածի «Վաղարշապատի Մ. Մաշտոցի անվան N1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն NN1-2 հավելվածների:

2. Հաստատել «Արազափի Թ. Հուրյանի անվան միջնակարգ դպրոց» և «Վաղարշապատի Մ. Մաշտոցի անվան N 1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունների փոփոխությունները՝ համաձայն NN1-2 հավելվածների:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 29028401179 ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

04447253

«Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2026 թվականի փետրվարի 23-ի ՆՄՊ/104Ա որոշման»

«Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2017 թվականի հոկտեմբերի 18-ի N393 որոշման»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ
1. «Արազափի Թ. Հուրյանի անվան միջնակարգ դպրոց»
2. «Վաղարշապատի Մ.Մաշտոցի անվան N 1 հիմնական դպրոց»

Восстановимая подпись

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՄ ԱՐՄԱՆԻ ԱՐԱՄԻ
Serial number: HOVHANNISYAN ARAM 3812640023

Գլխավոր քարտուղար՝ Ա. Հովհաննիսյան